

~~1796~~
~~-11~~

ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՇ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԳԻՐՔ № 15

ՈՐ Ե ՀԱՏԱԿԻԱԶԵՎ ՀԱՏԱԿԻԱԶԵՎ
ՀԱՏԱԿԻԱԶԵՎ ՀԱՏԱԿԻԱԶԵՎ ՀԱՏԱԿԻԱԶԵՎ

Ն. ԼԵՆԻՆԻ
ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ
ՊԵՐԱԲԵՐՅԱԼ, ՀՈԴՎԱԾՈՎ,

347.9
Դ-58

ԴՐԵՎԱՆ - 1928 թ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

6 1 MAR 2010
JUL 81

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՈԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՍՏՈՍԱՐԻԱՏԻ

347.96
n-58 ↗

ԳԻՐԳ № 15

ԱՌԱՎ ՀԱՏԿԻՉ Ե ԿԱՏԱԶԸՆ ՅԵՎ Ի ՆՉՈՒ
ԳՅՈՒՆ ՀԱՏԿԻՉ Ե ԿԱՏԱԶԸՆ ՅԵՎ Ի ՆՉՈՒ

Ն. Լենին
ԴԱՏԱԿԱՑՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀՈԴՎԱԾՈՎ.

1003
14685

ՅԵՐԵՎԱՆ — 1928 թ.

16 JUL 2013

38.699

Ն. Լենին

ԿՐԿՆԱԿԻ ՍՏՈՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դատախաղության հարցը տարածայնություն և առաջ բերել Համառուսական կենտգործկոմի աշխատանքները դեկավարելու համար կենտկոմի կողմից նշանակված հանձնաժողովի մեջ։ Յեթե այդ տարածայնությունների պատճառով հարցը ինքնարերարար չի փոխաղբվում Քաղբյուրո, ապա յես իմ կողմից այդ հարցն այնքան կարեոր եմ համարում, վոր առաջարկում եմ հանձնել Քաղբյուրոյի քննությանը։

Տարածայնությունների եյությունը հետեւյալն եւ.—Համառուսական կենտգործկոմի ընտրած հանձնաժողովի մեծամասնությունը դեմ և այն տեսակետին, թե դատախաղական հսկողության տեղական ներկայացուցիչները պետք են նշանակվեն միայն կենտրոնից և միայն կենտրոնին ել յենթարկվեն. մեծամասնությունը կողմնակից և դատախաղության այսպէս կոչված «կրկնակի» ստորագրության, վորը սահմանված ե ընդհանրապես բոլոր տեղական աշխատակիցների համար, այսինքն՝ նրանք գտնում են, վոր դատախաղական հրակողության տեղական ներկայացուցիչները մի

ՀԱՅՊՈԼԵԳՐԱՖԻ Դ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3964
ԳՐԱՓԵԹ. 841 Բ. ՏԵՐԱՌ 2500

կողմից՝ պետք է յենթարկվեն կենտրոնին, հանձննս համապատասխան կոմիտարիատի, իսկ մյուս կողմից՝ տեղական նահանգական դործկոմներին:

Համառուսական կենտրոնակոմի հանձնաժողովի՝ մեծամասնությունը նմանակեն մերժեց նաև այն տեսակետը, թե գատախազական հսկողության տեղական ներկայացուցիչները իրավունք ունեն տեղական նահանգական գործկոմների և ընդհանրապես տեղական իշխանության ամեն մի վորոշում բողոքարկելու որինականության տեսակետից:

Յես դժվարանում են հասկանալ, թե ինչպիսի պատճառարանությամբ կարելի յէ պաշտպանել Համառուսական կենտրոնակոմի հանձնաժողովի՝ մեծամասնության այդքան ակներեւ սխալ վորոշումը: Յես լսել եմ միայն այն պատճառարանությունը, վոր տվյալ դեպքում «կրկնակի» ստորագրության պաշտպանությունը—որինական պայքար ե բյուրոկրատական ցենտրալիզմի դեմ, պայքար հանուն տեղերի ինքնուրույնության և ընդդեմ կենտրոնի մեծամիտ վերաբերմունքի դեպի նահանգական գործկոմները:

Արդյոք կա՞ մեծամտություն այն հայացքի մեջ, վոր որինականությունը չի կարող լինել կալուգայի կամ կազանի, այլ պետք ե լինի մի և ընդհանուր, և մեր ամբողջ կյանքում ու մեր ամբողջ անկուլտուրականության մեջ հիմնական չարիքն այն է, վոր մենք մեր վաղեմի-ուսական անտարերությամբ և կիսավայրենիներին հատուկ սովորությամբ ուղղում ենք կալուգայի նահանգում այլ որինականություն սահմանել, կազանի նահանգում

որի ամբողջ Փեղերացիայի համար: Կենտրոնակոմի հանձնաժողովում մեծամասնություն ստացած և հաղթանակած տեսակետի հիմնական սխալն այն է, վոր նրանք «կրկնակի» ստորագրության սկզբունքը ճիշտ չեն կիրարելում: «Կրկնակի» ստորագրությունը անհրաժեշտ է այնտեղ, վորտեղ պետք է կարողանալ հաշվի առնել զանազանության իրական անխուսափելիությունը. Կալուգայի նահանգի հողագործությունը նույնը չե, ինչ վոր կազանի նահանգինը. նույնը կարելի յե առել նույն ամբողջ արդյունաբերության վերաբերմամբ. նույնը պետք է առել նմանապես և վարչական, կառավարման ամբողջ սիստեմի մասին. այս բոլոր հարցերում հաշվի չառնել տեղական զանազանությունը—նշանակում է ընկնել բյուրոկրատական ցենտրալիզմի մեջ և այն, նշանակում է խանգարել, թույլ չտալ տեղական աշխատավորներին կատարել տեղական զանազանությունների հաշվառում, վորը խելացի, արդյունավոր աշխատանքի հիմքն է կազմում: Մինչդեռ որինականությունը պետք ե լինի մի և ընդհանուր, և մեր ամբողջ կյանքում ու մեր ամբողջ անկուլտուրականության մեջ հիմնական չարիքն այն է, վոր մենք մեր վաղեմի-ուսական անտարերությամբ և կիսավայրենիներին հատուկ սովորությամբ ուղղում ենք կալուգայի նահանգում այլ որինականություն սահմանել, կազանի նահանգում

այլ։ Զպետք ե մոռանալ, վոր դատախազական հսկողությունը՝ տարբերվելով վարչական ամեն մի իշխանությունից, զուրկ ե վարչական վորեւե իշխանությունից և վոչ մի վարչական հարցի լուծման ժամանակ վճռական ձայնի իրավունք չի վայելում։ Դատախազը իրավունք ունի և պարտավոր ե միայն մի բան անելու—հետեւելու, վորպեսզի ամբողջ հանրապետության մեջ սահմանվի որինականության իրավես միատեսակ ըմբոնում, չնայած տեղական վորեւե զանազանության, հակառակ տեղական վորեւե ազգեցության։ Դատախազի միակ իրավունքն ու պարտականությունն եղործը հանձնել դատարանի վճռահատության։ Իսկ ի՞նչպիսի դատարաններ են այդ դատարանները։ Մեր դատարանները տեղական դատարաններ են. դատավորներն ընտրվում են տեղական խորհուրդների կողմից, ուստի և այն իշխանությունը, վորին դատախազը հանձնում ե իր կողմից հարուցված՝ որենքի խախտման վերաբերյալ գործի վճռահատությունը, տեղական իշխանություն ե, վորը պարտավոր ե մի կողմից՝ բացարձակապես պահպանել ամբողջ ֆեղերացիայի համար սահմանված միասնական որենքները, իսկ մյուս կողմից պատճի չափը վորոշելիս նկատի առնել տեղական բոլոր հանգամանքները, և միաժամանակ պետք է իրավունքն ունենա առելու, վոր թեև որենքն անկասկած այսինչ

գեպքում խախտվել ե, սակայն տեղական մարդկանց լավ հայտնի և տեղական դատարանում պարզված հանգամանքները դատարանին հարկադրում են անհրաժեշտ համարելու պատիժը այսինչ մարդկանց նկատմամբ մեղմացնել կամ նույնիսկ այսինչ մարդկանց համարել դատարանով արդարացած։ Յեթե մենք ամբողջ ֆեղերացիայում մի ընդհանուր որինականություն սահմանելու համար անհրաժեշտ այս ամենատարբական պայմանը, ինչպես ել լինի, չկատարենք, ապա վոչ պաշտպանություն և վոչ ել կուլտուրականություն ստեղծելու մասին խոսք անդամ լինել չի կարող։

Նմանապես սկզբունքորեն սիալ ե ասել, թե դատախազը չպետք ե բողոքարկի հահանգական գործկոմների և տեղական իշխանության այլ մարմինների վորոշումները, և վորպես թե՝ այդ վորոշումների որինականությունը վորոշելու յի Բանգյուղակաչությունը։

Բանգյուղակաչությունը քննության և առնում վոչ միայն որինականության, այլ նաև նպատակահարմարության հարցը։ Դատախազը պատասխանատու յի նրա համար, վորպեսզի տեղական և վոչ մի իշխանության և վոչ մի վորոշում չհակասի որենքին, և միայն այս տեսակետից դատախազը պարտավոր է բողոքարկելու ամեն մի առողինի վճիռ, բայց նա իրավունք չունի կասեցնելու վճիռը, այլ

պարտավոր ե միայն միջոցներ ձեռք առնելու, վորպեսզի որինականության բացարձակապես միատեսակ ըմբոնում սահմանվի ամբողջ Հանրապետության մեջ։ Այս տեսակետից ել Համառուսական կենտրոնական համագործկոմի հանձնաժողովի մեծամասնության վորոշումը վոչ միայն սկզբունքային խոչորագույն սխալ ե, վոչ միայն հիմքում սխալ կերպով ե կերպարկում «կրկնակի» ստորագրության սկզբունքը, այլ նաև խանգարում, անհնարին ե դարձնում որինականություն և նվազագույն կուլտուրականություն սահմանելու ամեն մի աշխատանք։

Այսուհետեւ, ավյալ հարցը վճռելու համար պետք ե հաշվի առնել տեղական ազգեցությունների նշանակությունը։ Կասկած չկա, վոր մենք ապրում ենք ապօրինության ծովում, և վոր տեղական ազգեցությունը ամենամեծ հակառակորդներից մեկը, յեթե վոչ ամենամեծ հակառակորդն ե հանդիսանում որինականություն և կուլտուրականություն հաստատելու գործում։ Հաղիվ թե վորեւ մեկը լած չլինի, վոր, ինչպես կուսակցության գտումը յերեան հանեց, տեղական ստուգողական հանձնաժողովները կուսակցության գտումը կատարելիս բազմաթիվ դեպքերում անձնական հաշիվներ են մաքրել այս փաստը անվիճելի յեւ բավականաչափ նշանակալիք։ Հաղիվ թե վորեւ մեկը ժխտի, վոր մեր կուսակցության համար ավելի հեշտ

բավականաչափ իրավաբանորեն կրթված և ամեն տեսակ զուտ տեղական ազգեցություններին դիմագրելու ընդունակ մի տասնյակ վատահելի կոմունիստ, քան հարյուրավոր այդպիսիներին գտնել։ Յեկ հարցն ել սրան ե վերաբերում, յերբ խոսում են դատախազության «կրկնակի» ստորագրության և նրան միայն կենտրոնին յենթարկելու անհրաժեշտության մասին։ Իսկ կենտրոնում մենք պետք ե դանենք մոտավորապես տասը մարդ, վորոնք իրականացնեն կենտրոնական դատախազական իշխանությունը հանձինս Գլխավոր Դատախազի, Գերագույն Տրիբունալի և Արդիոդկոմատի կոլլեգիայի (յես մի կողմ եմ թողնում այն հարցը, թե Գլխավոր Դատախազն այդ իրավունքը միանձնաբար ե իրականացնում, թե բաժանում է Գերագույն Տրիբունալի կամ Սրդժողկոմատի կոլլեգիայի հետ, քանի վոր այդ հարցը բոլորովին յերկրորդական հարց ե կարող ե լուծվել այս կամ այն ձեռվ՝ նայած թե կուսակցությունը այդ հսկայական իշխանությունը մի անձի յեւ վստահում, թե բաշխում ե վերոհիշյալ յերեք ինստանցիաների միջև)։ Այդ տաս մարդը, գտնվելով կենտրոնում, աշխատում են կուսակցության այն յերեք հիմնարկների ամենամեծավոր հսկողության տակ և նրա հետ ամենասերտ համերաշխությամբ, վորոնք առավելագույն յերաշխիք են հանդիսանում տեղական և անձնական ազ-

դեցությունների դեմ. այդ հիմնարկներն են—կենտկոմի Կազմբյուրոն, կենտկոմի Քաղբյուրոն և ԿՎՀ. այս վերջինը—ԿՎՀ, վորը պատասխանատու յէ միայն կուսակցության համագումարի առաջ, այնպես է կառուցվում, վոր ԿՎՀ անդամներից վոչ մեկը չի կարող միասնության կարգով ամենափոքր առնչություն ունենալ և վոչ մի ժողկոմատի հետ, և վոչ մի առանձին գերատեսչության հետ, խորհրդային իշխանության և վոչ մի այլ մարմնի հետ: Պարզ է, վոր այս պարագաներում մենք ունենք ամենամեծ յերաշխիքն այն մասին, վոր կուսակցությունը կստեղծի առավելապես կենտրոնացած մի կոլեգիա, վորն ընդունակ կլինի գործնականում դիմադրելու տեղական ազգեցություններին, տեղական և այլ տեսակ բյուրոկրատիզմին և ամբողջ հանրապետության մեջ և ամբողջ Փեղերացիայում սահմանելու որբնականության իսկական միտուսակ կիրարկություն: Ուստի այդ կենտրոնական իրավաբանական կոլեգիայի հնարավոր սխալները ուղղվում են հենց տեղն ու տեղը, անհապաղ այն կուսակցական մարմինների կողմից, վորոնք ընդհանրապես մեր ամբողջ կուսակցական և խորհրդային աշխատանքի բոլոր հիմնական ըմբռնումները և բոլոր հիմնական կանոններն են սահմանում վեղջ Հանրապետության մեջ:

Այս սկզբունքից շեղվել—նշանակում ե պաշտպանել այն տեսակետը, վոր վոչ վոք բացահայտ և անմիջական կերպով չի պաշտպանում, այսինքն՝ վորպես թե մեզանում արդեն այնքան մեծ չափով զարգացած են կուտարարականությունն ու նրա հետ անբաժանելի կերպով կապված որինականությունը, վոր մենք կարող ենք վստահ լինել, թե կարելի յե գտնել հարյուրավոր այնպիսի դատախազներ, վորոնք յերբեք վորեւ տեղական ազդեցության շեն յենթարկվի, և իրենք իրենց միատեսակ որբնականություն կահմանեն ամբողջ հանրապետության մեջ:

Այս ամենից հետո յես գալիս եմ այն յեղակացության, վոր «կրկնակի» ստորագրության սկզբունքը դատախազության նկատմամբ պաշտպանելը, նրան տեղական իշխանության բոլոր վորոշումները բողոքարկելու իրավունքից զրկելը վոչ միայն սկզբունքորեն սիսալ ե, վոչ միայն խանգարում ե անշեղ կերպով որբնականություն սահմանելու մեր հիմնական նպատակին, այլ նաև արտահայտում ե տեղական բյուրոկրատիայի և տեղական աղեցցությունների շահերն ու նախապաշարմունքը, այսինքն՝ ամենավատթար անջրպետն ե աշխատավորների և տեղական իշխանության ու խորհրդային կենտրոնական իշխանության, ինչպես նաև Ռիկ կենտրոնական իշխանության միջև:

Ուստի յես առաջարկում եմ կենտկոմին
մերժել այս գեղքում «կրկնակի» ստորագրու-
թյունը և սահմանել այնպիսի կարգ, վորի հա-
մաձայն տեղական դատախազական իշխանու-
թյունը միայն կենտրոնին յենթարկվի, և դա-
տախազական իշխանությանը վերապահվի ի-
րավունք և պարտականություն բողոքարկե-
լու տեղական իշխանության բոլոր և ամեն մի
վորոշում՝ այդ վորոշումների որինականու-
թյան տեսակետից, առանց այդ վճիռները
կասեցնելու իրավունքի, սակայն դործը դա-
տարանին հանձնելու բացառիկ իրավունքով:

1922 թ. մայիս 20-ին.

ՈՎԵԴԱՏԱԿԱՆ

ՅԵՎ

Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ Ե ԿԱՏԱՐՈՒՄ ՆԱ ԳՅՈՒՂՈՒՄ*

1. ԿՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՄՔ ԱՌԱՋ
ԲՈԼՈՅ ՄԻՋՑՑՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ Ե ԲԱՐԵԼԱՎԵԼ
ԳՅՈՒՂԱՑԲՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԸ.

Ներկայումս կոմունիստական (բայլէկիների) կուսակցությունը և մեր բանվորա-գյուղացիական կա-
ռավարությունն իրենց ամբողջ ուժերը զործ են դնում,
վորպեսզի բարելավեն, բարձրացնեն գյուղացիական տնտեսությունը, քանի վոր գյուղացիական տնտեսու-
թյունը յերկրի ամբողջ տնտեսության ամենազլիավոր չիմքերից մեկն է:

Ամեն մի բանվոր և գյուղացի շատ լավ հասկանում
է, վոր հողը յեռագաշտ սիստեմով մշակող և ճրադի
փոխարեն մարի (լուչինա) գործածող հին գյուղը այլ-
և չկա, այդ ժամանակներն արգեն անցել են: Այժմ
վոչ միայն գյուղացիական յերիտասարդությունը, այլ
և գյուղի ծերունիները գիտակցում են իրենց տնտեսու-
թյունը բարելավելու անհրաժեշտությունը. նրանք զի-
տակցում են, վոր այժմյան զարում մեքենայի ու ելեկ-
տրականության դար և, և հոգի յեռագաշտ մշակու-

*.) Այս բրոյուրը կազմելիս վորպես հիմնական նյութ և
ծառայել վ. Մակերի „Պրոկурօր և գրեալիք:

թյամբ ու արորով շատ բան անել չի կարելի: Բոլոր
աշխատավորների համար հասկանալի յե արգեն, վոր
բարձրացնելով ու բարելավելով մեր տնտեսությունը,
մենք հենց դրանով եւ նպաստած կիմնենք ամբողջ յեր-
կրի կյանքը բարելավելուն: Տնտեսության բարելավու-
մը վոչ միայն մեզ նյութական շահ կտա, այլ նաև կը
բարձրացնի մեզ կուլտուրապես, իսկ կուլտուրակա-
նության կարիքը շատ մեծ և մեզանում:

Այդ գլխավոր նպաստակն իրազործելու համար պե-
տությունն այժմ մի շարք միջոցներ և ձեռք առնում,
վորպեսզի ամեն կերպ բարելավի գյուղի կյանքը: Բա-
րելավում և գյուղական իշխանության մարմինների
և կոռպերացիայի աշխատանքը, ընդարձակվում և ժո-
ղովրդական լուսավորության հիմնարկների թիվը:
Ինքը, գյուղացիական բնակչությունը մասնակից և
արգում գյուղի տնտեսական և կուլտուրական մակար-
դակը բարձրացնելու համար կատարվող բազմակող-
մանի աշխատանքներին: Իշխանության կողմից ձեռք
առնվոր միջոցները կյանքում ամենալավ ձեռվ իրա-
կանացնելու համար. կոմունիստական կուսակցությու-
նը իր լավագույն անդամներին ուղարկում և գյուղ աշ-
խատելու:

Գյուղում գեռ շատ մեծ և դժվարին աշխատանք
պետք և կատարել նոր կյանք ստեղծելու համար: Զա-
փազանց խնդ արմատներ և զցել հին գյուղը՝ հարկա-
վոր են հսկայական ջանք, համառ պայքար և վճռակա-
նությունն, վորպեսզի հնարավոր լինի գյուղից վերա-
ցնել ստրկության դարավոր ժառանգությունը—չքա-
վորությունը, խավարն ու տգիտությունը, և այդ բո-

լորի հետևանք հանցագործությունը: Այս ուղղու-
թյամբ շատ բան արգեն կատարված ե: Սակայն վերջ-
նական հաղթանակը տարած կլինենք միայն ժամ-
անակ, յերբ բոլոր աշխատավորները, ամբողջ գյու-
ղացիությունը վճռական պայքար մղեն դարավոր շա-
րիքի դեմ, յերբ նրանք անձամբ, անմիջաբար մասնակ-
ցեն յերկրի շինարարությանը, յերբ նրանք անձամբ
կովեն հանուն նոր, լուսավոր և կուլտուրական
կյանքի:

Խորհրդային իշխանության կողմից ներկայումս
ձեռք առնվոր մի շարք միջոցներից հսկայական նշանա-
կություն ունի հեղափոխական որինականության ամ-
րացումը: Այս—ամենահիմնառեկան խնդիրներից մեկն և,
և այս խնդիրն իրազործելու վրա թե կոմունիստական
կուսակցությունը և թե խորհրդային իշխանությունը
հատուկ ուշադրություն են դարձել. առանց այդ
խնդիրն իրազործելու հնարավոր չե գյուղում նոր
կյանք կառուցել:

Հեղափոխական որինականությունը խախտողների
դեմ պայքարելու համար ստեղծված և հատուկ մար-
մին—խորհրդային դատախազությունը: Թե կոմունիս-
տական կուսակցությունը և թե խորհրդային իշխանու-
թյան մարմինները անդարձար աշխատում են լուծել,
պարզել այն հարցը, թե ինչպես կարելի յե լավագույն
ձեռվ լիակատար հեղափոխական որինականություն
հաստատել: Այս հարցով հատկապես զբաղվել են 14-րդ
կուսակցական կոնֆերենցիան և խորհուրդների մեր-
րորդ Համագումարը:

Տեսնենք, թե ինչ և հեղափոխական որինականու-
թյունը և ինչու յե այն հարկավոր գյուղին:

2. Ի՞նչ և զեղափոխական ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԻ
ՅԵՎ Ի՞նչ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՅՆ ԳՅՈՒՂԻ
ՀԱՄԱՐ

Իր սեփական տնտեսությունը վարող յուրաքանչ-
չյուր գյուղացի գլուխ, վոր առանց վորոշ կարգ ու կա-
նոնի չի կարելի տնտեսություն վարել և լավ արդյունք-
ների համանել:

Տնտեսության համար շատ վատ կլիներ, յեթե
նրա անդամները չենթարկվելին այն կարգ ու կանո-
նին, վոր սահմանում և ընտանիքի ամենից փորձքած
անդամը: Կարգ ու կանոնը անհրաժեշտ է ամեն մի գոր-
ծի մեջ, անհրաժեշտ է նաև հասարակական գործում,
և ել ավելի—պետական գործում:

Միանդամայն անկարելի կլիներ մեր պրոլետարա-
կան պետության շինարարությունը կատարել, յեթե
այդ շինարարության մեջ վորոշ կարգ ու կանոն չկի-
ներ, և բոլորը այդ կարգ ու կանոնին չենթարկվելին:

Յեվ ահա, վորպեսզի ընդարձակ ժողովրդական
տնտեսություն ունեցող մեր պետության շինարարու-
թյան մեջ կարգ ու կանոն լինի, վորպեսզի աշխատա-
վորները ինքնուրունաբար և վստահությամբ կարողա-
նան իրենց յերկրի տնտեսական կյանքը կառուցել, մե-
դանում զանազան որենքներ են հրատարակվում:

Հեղափոխական որինականություն սահմանել,
այդ նշանակում և պահանջել, վորպեսզի կիրարկվի
խորհրդային իշխանության որենքներով սահմանքած
կարգ ու կանոնը: Ուրեմն, հեղափոխական որինակա-
նությունը պրոլետարական պետության կանոնավոր
շինարարության հիմքն ե:

Ուրենքները սահմանում են քաղաքացիների փո-
խաղարձ հարաբերության կանոնները. այս կանոնների
համաձայն քաղաքացիների վորող գործողություններ
համարվում են թույլատրելի, վոչ վոքի կողմից չեն
հետապնդվում, իսկ վորոշ գործողություններ ել ար-
դյուլվում են, վորպես ամբողջ հասարակության համար
վնասակար, և այս գործողությունների համար հան-
ցավորները յենթարկվում են պատասխանատվության:

ՀԵԹԵ
Ց
Ց
Ց
Ց
Ց

ՅԵԹԵ, որինակ, գյուղացին զբաղվում ե գյուղա-
տնտեսական արտադրողական աշխատանքով, ապա
գրա համար նրան վոչ վոք չի կարող և չի յել հետա-
պնդի, ընդհակառակը, յերբ նա տնտեսությունը վա-
րում և տեխնիկայի պահանջների համեմատ և հողը
կուլտուրական ձևերով ե մշակում, ապա նա խրախու-
վում ե: Սակայն, յեթե գյուղացին վրիժառության
համար հրդեհում և իր հարեանի գեղը, կամ վորեե
խորհրդային պաշտոնյա կաշառք և վերցնում, կեղծիք
և կատարում, ապա այդ գործողությունները, վորպես
որենքով արգելված գործողություններ, պատժվում
են անողոք կերպով, հեղափոխական որենքի ամբողջ
խստությամբ: Վերևում մենք արդեն ասացինք, վոր
մեր պետության ամենախոռվ անկյուններում հեղափո-
խական որինականություն հաստատելը որվա ամենա-
հիմնական, ամենակարևոր ինդիբներից մեկն ե: Սա-
կայն գրա համար միայն որենքներ հրատարակելը, ե-
հարկե, քիչ ե. որենքը գրվում և բոլորի համար. այդ
որենքները պետք է հայտնի լինեն ամենքին և կատար-
վեն այն ամենքի կողմից, վորոնց վերաբերում են:
Ուստի քաղաքացին, ինչ պաշտոն ել ունենա, նա պար-

տավոր և կատարելու որենքների այն պահանջը, վորը վերաբերում է նրան:

Ամենից քիչ որենքը գիտեն գյուղում, և այդ պատճառով ել ամենից շատ որենքը խախտում են գյուղում. ահա զրա համար ել հենց գյուղի վրա, իշխանության ստորին մարմինների վրա այսոր հատուկ ուշադրություն է դարձվում:

Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը քաղաքացիական պատերազմը վերջանալու և խաղաղ տնտեսական աշխատանքի անցնելու առաջին խմբ որերից սկսեցին հոգալ գյուղի կյանքը բարելավելու մասին: Բարձրացնել գյուղի տնտեսական և կուտարածական մակարդակը, արմատախիլ անել ամեն տեսակ հանցագործությունները, բարելավել գյուղական խորհրդային ապարատի աշխատանքը, — այս բոլոր հարցերը կոմունիստական կուսակցության մշտական հոգացողության առարկա յեն կազմել. կուսակցության «ավելի մոտ մասսաներին», «Յերեսներս դեպի գյուղ», «Քաղաքի և գյուղի մերձեցում» լսունդները ամենալավ ապացույցներն են այն բանի, վոր կուսակցությունն այդ հարցերի մասին մտածել ու հոգացել ե:

Համկոմկուսի 14-րդ կոնֆերենցիան և խորհուրդների համամիութենական համագումարը, վորոնք տեղի ունեցան 1925 թ. ապրիլ և մայիս ամիսներում, ինչպես մենք արդեն հեշեցինք, հատկապես քննության առան այն հարցը, թե ինչ միջոցներով կարելի յե ամրացնել հեղափոխական որինականությունը ամբողջ յերկուում և, հատկապես, գյուղում:

Կոնֆերենցիան հանձնարարեց կուսակցության վենաբոնական կոմիտեին մշակել այն բոլոր անհրաժեշտ միջոցները, վորոնցով պետք է հեղափոխական որինականությունն ամրացնել և կիրարկել կյանքում:

Խորհուրդների միութենական համագումարը գըտավ, վոր հեղափոխական որինականությունն ամրացնելու համար, անհրաժեշտ և ուժեղացնել որենքը խախտողների, վարչական կամայականությունների, քաղաքացիներին կոպտարար և անուշադիր վերաբերյելու և իշխանությունը վորեւ կերպ ի չարը գործ զնողների գեմ մղվող պայքարը:

Համագումարը անհրաժեշտ համարեց նաև բանվորական ու գյուղացիական մասսաներին լայն կերպով ծանոթացնել խորհրդային որենսդրությանը և սովորեցնել, ցույց տալ նրանց, թե ինչպես պետք է գանցաւ տալ իշխանության մարմինների գործողությունների գեմ այն դեպքերում, յերբ նրանք խախտում են որենքը: Սրա համեմատ ել համագումարը մի շարք վորոշումներ ընդունեց, վորոնք վերաբերում են հեղափոխական որինականությունն ամրացնելուն:

Հեղափոխական որինականությունը կիրարկել ամենից առաջ այդ նշանակում և պայքարել ամեն տեսակ հանցագործությունների գեմ:

Գողությունը, սպանությունը, հրկիզումը, կաշառակերությունը, կեղծիքը, վատնումները, ձըդձգումները, կամայականությունը ճորտատիրական և ցարական կարգերի հարյուրամյա գոյության ընթացքում իրենց համար ամուր բուն են հյուսել մեր գյուղում և դժվարությամբ են արմատախիթ արվում:

կայն վորքան աշխատավորները լավ իմանան որենքները, վորքան նրանք համառորեն պահանջեն, վորքեսպիթչիսանության ստորին ներկայացուցիչները կատարեն այդ որենքները, այնքան արտղությամբ գյուղը կրուժվի այդ գարավոր հիվանդություններից :

Սակայն բացի հանցագործությունից կան որենքի խախտման շատ այնպիսի գեղագեր, վորոնք թեև հանցանք չեն համարվում, սակայն հանցագործությունից պակաս չեն խանդարում գյուղի տնտեսական կյանքը զարգացմանը: Դրանք այն անկանոնություններն են, վորոնք տեղի յեն ունենում գյուղատնտեսական հարկերատոնությունները վորոշելիս, անտառանյութ, դրամական փոխատվություններ ստանալիս, հողաշնարարական աշխատանքները կատարելիս, կամ ընտանիքի դույքը բաժանելիս տեղի ունեցող անարդարությունները և նման այլ յերեսույթները: Մեծ մասամբ այդ յերեսույթները տեղի յեն ունենում այն սրատճառով, վոր թե բնակչությունը և թե իշխանության ներկայացուցիչները որենքները չեն իմանում. ուրեմն այդ յերեսույթների դեմ պայքարել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ գյուղում հեղափոխական որինականություն հաստատվի:

Այսպիսով հեղափոխական որինականությունը գյուղում պետք է գյուղացուն պաշտպանի թե պաշտոնյաների կամ այականություններից, թե մասնավոր անձանց հանցագործությունից և թե որենքի ամեն տեսակ խախտումներից՝ անկախ այն հանդամանքից, թե ով է կատարում այդ խախտումը:

Բանվորագյուղացիական լայն մասսաներն իրենք

են հանդիսանում իրենց որենքները սահմանողը, ուստի և իրենք ել շահագրգուված են, վորպեսպիթի այդ որենքները պահպանվեն:

Յեվ միայն աշխատավորների սահմանած այդ որենքները կատարելով կարելի յե իրականացնել քաղաքի և գյուղի մերձեցումը, բանվորի ու գյուղացու այն սերտ բարեկամությունն ու գործակցությունը, վորի չնորհիվ մեր պետությունը դառնում է անհաղթելի: Միայն իշխանության բոլոր մարմինների կողմից որենքը խստությամբ և անշեղ կատարելու գեղքում գյուղացին անխախտ հալաւ կունենա, վոր նրա ազատությունը, կյանքը և գույքը ապահովված են: Այդ ժամանակ նա կվարողանահ հանդիսատ կերպով նվիրվել խաղաղ աշխատանքի:

Քաղաքացիական պատերազմը դադարելուց հետո խորհրդային իշխանությունն անմիջապես սկսեց հրատարակել ինչպես առանձին քաղաքացիների կյանքի, այնպես և իշխանության ներկայացուցիչների գործունեության դանագան կողմերին վերաբերյալ որենքներ. ահա այդ ժամանակ ել անհրաժեշտություն առաջ յեկալ հետեւելու այդ որենքների կատարմանը, այսինքն ամրացնելու հեղափոխական որինականությունը: Այս նպատակով 1922 թ. հունիսին ստեղծվեց մի հատուկ մարմին—պետական զատախաղությունը:

3. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՏԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վորպեսպիթի գատախաղությունը կարողանա կատարել հեղափոխական որինականությունը պահպանելու ասպարեզում իր վրա գրված պարտականությունները

և վճռական կերպով պայքարել հանցագործության գեմ, զատախաղության տեղական մարմինները յենթարկվում են հանրապետության դատախաղին: Իշխանության տեղական մարմիններին նրանք չեն յենթարկվում, և այդպիսով յուրաքանչյուր դավառական դատախաղ կենտրոնական իշխանության ներկայացուցիչն եւ հանդիսանում:

Դավառական դատախաղները աշխատում են հանրապետության դատախաղի ղեկավարությամբ և նշանակվում ու արձակվում են նույնպես միայն Հանրապետության դատախաղի կողմից:

ՀՍԽՀ ամբողջ դատախաղության գլուխն եւ կանգնած Արդարադատության ժողովրդական կոմիսարը, վորը միաժամանակ հանդիսանում են նաև Հանրապետության Դատախաղը:

Հանրապետության Դատախաղը և նրան առընթեր գործող կենտրոնական դատախաղությունը հսկում են Հանրապետության կենտրոնական հիմնարկների և ժողովրդական կոմիսարիատների գործունեության որինականության վրա: Այն գեղքերում, յերբ այդ հիմնարկների կարգադրությունները չեն համապատասխանում որենքին, Հանրապետության Դատախաղը այդ մասին գիմում եւ տալիս կենտրոնական Գործադրիք Կոմիտեի Նախագահությանը կամ Ժողովրդական Կոմիտեների Մորհրդին, խնդրելով վերացնել որենքին հակասող կարգադրությունը: Դատախաղի այդ դիմումը կոչվում է բողոք: Իր աշխատանքների համար Հանրապետության Դատախաղը հաշվետու յե միայն կենտրոնական պատասխանությունը:

4. ԴԱՏԱԽԱՂԸ ՀԱԿՈՒՄ Ե ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԱՆԿԱՆԱԿՈՒՄ ՎՐԱ

Շատ բարդ և պատասխանատու խնդիրներ են դըրվում պետական գառականացության վրա: Նա կոչված է պետության անունից հսկելու իշխանության բալոր մարմինների, անտեսական հիմնարկների, հասարակական ու մասնավոր կազմակերպությունների և մասնավոր անձանց գործողությունների որինականության վրա: Որենքների խախտման գեմ նա պայքարում ե՝ խախտողների գեմ քրեական հետապնդություն հարուցելով կամ ապօրինի վորոշումների գեմ բողոքելով:

Իսկ ի՞նչ իրավունքներ են տրված դատախաղին, վորպեսզի նա կարողանա իր ժամանակին նկատել ու բենքի խախտումը և վերացնել այդ խախտումը:

Իշխանության ամեն մի մարմնից, անտեսական հիմնարկից, հասարակական և այլ կազմակերպություններից դատախաղությունն իրավունք ունի պահանջելու իրեն անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը: Դատախաղության այդ պահանջները պարտադիր են այն բոլորի համար, վորոնց նրանք վերաբերում են:

Ինչպես վերեւում ասվեց, դատախաղությունը հսկողությունն իրականացնում ե յերկու յեղանակով՝ կամ բողոքում և իշխանության մարմինների այն վորոշումների գեմ, վորոնք չեն համապատասխանում որինքի պահանջներին կամ քրեական հետապնդություն և հարուցում հանցագորին գեմ:

Այսպես, որինակ, յեթե զավառակային գործկոմը վորոշում և բնակչությունից զանձել այնպիսի առութք,

վորը որենքով նախատեսված չէ, դատախաղը բողոքարկում և այդ վորոշումը, վորպես որենքը խախտող վորոշում, այսինքն՝ դիմում և վերագաս գործկոմին, խնդրելով վերացնել այդ վորոշումը: Իսկ յեթե այդպիսի վորոշումները հաճախ են կայացվում, չնայած նախազդուցացումներին, կամ, յեթե, որինակ, դավառակային գործկոմն անհրաժեշտ միջոցներն ձեռք չի առել, և դրա պատճառով վորեն ծանր հետևանքներ են առաջացել, ասլա այդպիսի դեպքերում դատախազությունը կարող և քրեական հետապնդություն հարուցել դավառակային գործկոմի նախագահի և անդամների դեմ:

Ներկայումս դատախազությունը, ինչպես նաև ամբողջ խորհրդային իշխանությունը, իր հիմնական խնդիրն և համարում—յերեսը դեպի դյուդ դարձնել, ուշադիր ականջ զնել դյուդացու դժգոհություններին և այն բողոքներին, վոր նա տալիս և իշխանության տեղական մարմիններին, հատկապես ստորին մարմինների անկանոն գործողությունների դեմ: Այս իսկ պատճառով ել իշխանության ստորին մարմինների (դավառակային գործկոմ, դյուդալորհություն) գործողությունների որինականության վրա հակելու գործին դատախազությունը ամենալուրջ ուշադրությունն է նվիրում:

Դատախազությունն աշխատում է, վորպեսզի իշխանության դյուդական մարմինների բոլոր գործողությունները, վորոշումներն ու վճիռները չհակառեն գործող որենքներին: Այժմ Խորհրդային իշխանությունը ձեռք է առնում բոլոր միջոցները, վորպես

անկուսակցական դյուդացիական լայն մասսաներին մասնակից անի տեղական խորհրդադների և հասարակական կազմակերպությունների ընտրություններին և աշխատանքին: Շատ գեղքեր են յեղել, յերբ դավառական և գյուղական ընտրական հանձնաժողովներն առանց բավարար հիմքի սահմանափակել են քաղաքացիների իրավունքը՝ զրկելով նրանց խորհրդադների և կոռպերատիվ ու այլ կազմակերպությունների ընտրության մասնակցելու հնարավորությունից: Հաճախ չեն կատարվել հանրապետության հիմնական որենքների պահանջներն այն դեպքերում, յերբ հեռացվել են խորհրդային ստորին ապարատի ընտրութիւն պաշտոնյաները, հաճախ սխալ կերպով են կազմվել ընտրական ցուցակները, և այլն: Դատախազությունը միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի ընտրություններին չմասնակցեն դյուզի կուրակ և վաշխառու տարրերը, վորոնք որենքով զրկված են ընտրություններին մասնակցելու իրավունքից: Մյուս կողմից՝ դատախազությունը՝ ստացված զանդատների հիման վրա պարտավոր է միջոցներ ձեռք առնել վերականգնելու քաղաքացիների այն իրավունքները, վորոնք խախտված են այս կամ այն հանձնաժողովի կամ առանձին պաշտոնյաների կողմից:

Վերջին ժամանակներում դավառակային գործկոմների և գյուղաբորհուրդների իրավունքները զգալի չափով ընդլայնված են: Այդ կատարված է այն նպատակով, վորպեսզի հնարավոր լինի դյուզը տնտեսապես վերածնել, բարձրացնել նրա բարեկեցության ընդհանուր մակարդակը: Դատախազության կոչումն ու

պարտքն և ամեն կերպ աջակցել իշխանության ստորին մարմինների բազմազան ու պատասխանատու աշխատանքին :

5. ՊԵՅՔԱՐ ԱՊՈՐԻՆԵՐ ՊԱՐՏԱԴԻԻՐ ՎՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Այս ասպարիգում՝ գատախաղությունը հետեւում է, վորպեսզի իշխանության մարմինները դուրս չգան որենքով նրանց վերապահված իրավունքների ու լիազորությունների սահմաններից : Դատախաղությունը պետք է իր ժամանակին նկատի և մատնանշի տեղի ունեցող սխալները : Մասնավորապես դատախաղությունը հսկում է, վրաբեսզի գավառային և գավառակային գործկոմների կողմէից հրատարակվող պարտադիր վորոշումները լինեն կանոնավոր և չհակասեն որենքին :

Ծառ հաճախ գավառակային գործկոմները պարտադիր վորոշումներ հրատարակելիս անցնում են որենքով դրված սահմանից . նրանք պարտադիր վորոշումներ են հրատարակում այնպիսի հարցերի վերաբերմամբ, վորոնք դուրս են նրանց իրավասությունից : Որենքը վորոշում է, վոր գավառակային գործկոմները միայն հետեւյալ հարցերի մասին կարող են պարտադիր վորոշումներ հրատարակել :

ա) հասարակական կարգի և ապահովության պահպանման և մասնավորապես սրիկայության դեմ պայքարելու,

բ) հակահրդեհային միջոցների,

գ) տարեբային աղետների դեմ պայքարելու,

դ) անսառների, համաձարակների և վիճակական դրության, վորոշների ու սանդուխքների լուսավորության, աների ճակատին ԱՆՆԵ-ՆԵՐ դնելու, ինչպես նաև նկուղային շնչքերը չորացնելու :

է) բնակարանների, բակերի, փողոցների և հասարակական ոգտագործման այլ վայրերի սանդուխքների լուսավորության, աների ճակատին ԱՆՆԵ-ՆԵՐ դնելու, ինչպես նաև նկուղային շնչքերը չորացնելու :

զ) անսառները, մարդագետինները, ցանքերն ու կանաչը արածացնելուց պահպանելու,

ը) առետուր անելու ժամանակի ու կարգի, չուկաներում և առետուրի այլ վայրերում կարգ ու կանոնահամանելու,

թ) անցնող զորքերին բնակարաններ հատկացնելու,

ժ) տեղական նշանակություն ունեցող վոռողմանցանցի պահպանության,

ի) զաղանի և ապօրինի ողեղործության դեմ պայքարելու, և

լ) ելեքտրալարերի ու հեռագրական ցանցի պահպանության :

Մենք գիտմամբ թվեցինք այլ հարցերը, վորոշչեան շատ գավառակային գործկոմներ, ինչպես ցուցեն են տալիս դատախաղական հակողության դիտողությունները, հրատարակում են նաև այլ հարցերի վերաբերյալ պարտադիր վորոշումներ : Այսպես, որինակ, սահմանում են առետուրը կաշկանդող կանոններ, արգելում են յերիտասարդներին յերեկոյան ժամի 8-ից հետո վորոշ գուրս զալ, բնակչությանը պարտավորեցնում են զպրոցների, հիվանդանոցների և խորհրդային ծառայողների համար վառելիք բերել, և այլն Այսպիսի հարցերի մասին գավառակային գործկոմ-

ներն իրավունք չունեն պարտադիր վորոշումներ հրատարակելու :

Գավառակային գործկոմների պարտադիր վորոշումները խախտելու համար որենքը սահմանում է կամ 25 ոուրլի տուգանք կամ 2 շաբաթ հարկադիր աշխատանքներ :

Մինչեւ շատ գալառակային գործկոմներ քաղաքացիներին յենթարկում են 25 ոուրլուց ալելի տուգանքի կամ 2 շաբաթից ավելի հարկադիր աշխատանքների : Իհարկե որենքի այդպիսի խախտումները չելին լինի, յեթե ինքը բնակչությունը իմանար թեկուզ այն հիմնական որենքները, վորոնց մասին մենք հիշեցինք : Սակայն բնակչությունն այդ մասին չգիտե, և ահա, դատախազությունն այսուղ ել հենց նրան ոգնության և հասնում :

Պարտադիր վորոշումներ հրատարակելու կանոնները խախտելու բոլոր գեղքերում դատախազությունը կարող ե այդ վորոշումներն անհապաղ վերացնել տալ :

Այսուհետեւ, դատախազությունը հսկում ե, վորոպեսզի գավառակային գործկոմներն ու գյուղխորժորհությունները որենքին հակասող վորոշումներ չկայացնեն : Այս նպատակով դատախազությունը ծանոթանում է, նայում ե գավառակային գործկոմների (գյուղխորհությունների) նիստերի արձանագրությունները և ապօրինի վորոշումները յերեան հանելու գեղքում միջոցներ և ձեռք առնում այդ վորոշումները վերացնելու համար :

Յերեմն պատահում ե, վոր իշխանության ստորին մարմինները (գավառակային գործկոմներն ու գյուղ-

խորհուրդները) գյուղի քաղաքացիներին յենթարկում են վարչական կալանքի կամ հարկադիր աշխատանքների : Բոլոր գյուղացիները պետք է իմանան, վոր գյուղական իշխանության բոլոր այդպիսի գործողությունները միանգամայն ապօրինի յեն և, մեր քրեական որենքների համաձայն այդպիսի վորոշումներ կայացնող անձինք պատճենման, վորակես իշխանագանցներ, այսինքն՝ իրենց իշխանության սահմաններից գուրս յեկողներ :

Յեվ իշխանության ստորին մարմինների աշխատակիցները պետք ե ըմբռնեն, պետք ե յուրացնեն այն միտքը, վոր որենքը քաղաքացիներին վարչական կարգով ձերբակալու իրավունք չի տալիս վոչ միայն գավառակային գործկոմներին, այլ նաև գավառային գործկոմներին :

Դժբախտաբար բնակչությունը և իշխանության ստորին մարմինների աշխատակիցները գեռ չեն ըմբռնել, չեն յուրացը ել այդ բանը : Ուստի և դատախազությունը, ստորին մարմինների վրա հսկելիս ստիպված ենակ այդ հարցերին ուշադրություն նվիրել :

Արդեն ժամանակ ե, վորպեսզի ստորին ապարատի աշխատակիցներն իմանան, վոր անձնական հայեցողությունն ու վարչական ավելորդ, անտեղի յեռանդը, վորի հետևանքն ե լինում ձերբակալություններ կատարելն ու հարկադիր աշխատանքներ նշանակելը, միանգամայն անհանդուրժելի կամայականություն ե Պետք ե, վերջապես, հասկանալ, վոր կառավարել ամենեմին չի նշանակում անքան ինքնուրույնաբար գոր-

Ժեւ, վոր չենթարկվել նույնիսկ դործող որենքներին, իր աշխատանքը չհամաձայնեցնել այդ որենքների հետ:

6. ՊԱՅՔԱՐ ՀՈՐԿԵՐ «ՍՏԵՂԾԵԼՈՒ» ՅԵՎ ՀՈՐԿԱՑԻՆ
ՈՐԵՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽԾԵԼՈՒ ԴԵՄ

Դրամական գործերն այժմ մեր հանրապետության մեջ լավ գրության մեջ են և կանոնավորված են: Մեր գրամները դեռ 1924 թ. սկսած միանդամայն կայուն են դարձել, և դրամական անտեսությունը այժմ կառուցված է կայուն և հաստատուն պլանի համաձայն: Իշխանության յուրաքանչյուր մարմին, յուրաքանչյուր հիմնարկ ունի իր կայուն բյուջեն, վորի սահմանելում եւ կատարում է իր ծախքերը: Իրենց բյուջեն ունեն հանգամանքային գործկոմները և մի քանի տեղ՝ նաև գյուղխորհուրդները: Այդ բյուջեների մեջ նախատեսված է, թե ինչ ծախքեր կարելի յե անել, և բացի գրանից, ցույց ե տրված, թե այդ ծախքերն ինչ աղբյուրներից պետք է հասուցել: Յեկամահ աղբյուրների մի մասը կազմում են հարկերը:

Ներկայում բոլոր հարկերն ու տուրքերը սահմանված են որենքով. չկա և չի կարող լինել այնպիսի հարկ, վորի մասին որենք չլինի, սակայն գյուղական կյանքում գեռ չատ գեղքեր են լինում, յերբ զավառակային գործկոմներն եւ գյուղական խորհուրդներն իրենց վորոշումներով գյուղացիների վրա որենքով չսահմանված հարկեր են դնում զանազան կարիքներ հոգալու համար, ինչպիս որինակ՝ հիմնարկները պահելու, չենքերը նորոգելու համար և այլն: Ինքնազլուխ կերպով գրված այդ հարկերն աղբյուրինի հարկեր են,

և խորհրդային իշխանությունը վճռական կերպով պայքարում է դրանց դեմ: Այս պայքարը ես մեծ չափով ընկնում ե գատախազության վրա, նա պարտավոր է բոլոր միջոցները ձեռք առնելու, վորպեսզի յերեան հանի ինքնազլուխ կերպով սահմանվող ապորինի հարկերը և դադարեցնի նրանց դանձումը, կանգ չառնելով այլպիսի դեպքերում հանցավորներին նույնիսկ դատի տալու առաջ: Դատախազությունը պարտավոր է հսկելու նաև, վորպեսզի ստորին մարմինները ճշտությամբ կատարեն իրենց հաստատված բյուջեն և այդ բյուջեյի համաձայն ել ծախքեր անեն:

Պակաս լուրջ նշանակություն չունի գյուղի կյանքում նաև այն հանդամանքը, վոր գյուղատնտեսական միասնական հարկը զանձվի որենքով սահմանված կարգով և ժամկետներին, քանի վոր գյուղացու շահերի տեսակետից մեծ կարևորություն ունի հարկը զանձելու ժամանակն ու ձեռք: Խորհրդային իշխանությունը ձեռք ե առնում բոլոր միջոցները, վորպեսզի վորքան հնարավոր և գյուղացու, հատկապես չքավոր ղյուղացու համար հեշտացնի հարկի մուծումը. այս նպատակով ել հարկը միանդամից չի զանձվում, այլ ժամանաս, մի քանի ժամկետներում, և այդ ժամկետները սահմանվում են որենքով, վորի մասին բնակչությանը ժամանակին տեղեկություն ե տրվում: Բացի գրանից որենքը պահանջում է, վորպեսզի յուրաքանչյուր հարկ վճարողի ժամանակին հարկաթերթ հանձնի: Վերջապես մեր որենքն ապահովում է չքավորության շահերն այնպես, ինչպես աշխարհում և վոչ մի որենք այդ չի անում. ուստի և, թե գյուղատնտե-

սական հարկի վերաբերյալ որենքի մեջ, թե վայս
րաց թողնելու և թե փոխատվություն տալու վերաբեր-
յալ որենքներում մի շարք արտօնություններ են սահ-
մանվում չքավորների և կարմիր բանակայինների
տնտեսությունների համար :

Սակայն դյուզի թույլ, աղքատ տնտեսություննե-
րի կողմից դատախազությանը տրվող գանգատներից
յերեսում ե, վոր շատ գեղագիրում մեր խորհրդային ո-
րենքը չքավորին չի հասնում. չքավոր տնտեսություն-
ների մի գդալի մասը յերբեք չի ոգտվում այն զեղչից
ու արտօնություններից, վորոնք որենքով տրվում են
նրան : Չքավորները գանգատ են տալիս հարկային
ժարմիններին, սակայն այդ գանգատները շատ անդամ
ժամանակին չեն քննվում :

Եռոյն բանը տեղի յե ունենում նաև տնայնագործ-
ների ու արհեստավորների նկատմամբ. որանց վրա յել
հաճախ սինալ կերպով հարկեր են դրվում, սահմանված
արտօնությունները նրանց չեն տրվում և այլն :

Աչա այս բոլոր գեղագիրում ամեն մի գյուղացի,
մանավանդ չքավոր գյուղացի, կարող ե դիմել, դան-
գատ տալ դատախազությանը : Դատախազությունն
այն ժարմինն ե, վորը գյուղացիներին պաշտպանում և
տեղական իշխանության անկանոն և անարդարացի
դործողություններից :

Դատախազը կարեոր գեր ունի կատարելու նաև
բնակչության ինքնահարկման ասպարիզում : ՀՍԽՀ
Կենտգործկոմի 1928 թ. հունվարի 28-ի վորոշման հա-
մաձայն գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովնե-
րին իրավունք և տրվում էր կուլտուր-տնտեսական

առանձին կարիքները բավարարելու համար ինքնա-
հարկում կատարել. ահա դատախազությունը պետք և
հետեւ, վորպեսզի ինքնահարկումը կատարվի այն
կարգով և այն նպատակների համար, վորոնք ցույց են
որված վերոհիշյալ որենքի մեջ, —ա) կուլտուր-կրթա-
կան, սոցիալական ապահովագրության, ինչպես նաև
գյուղատնտեսության բարձրացման նպաստող հիմ-
նարկություններ, այն ե՝ գպրոցներ, գրադարաններ,
խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ, կարմիր ան-
կյուններ, ժողովրդական տներ, մանկական մոուլոններ
և մանկատներ ու մանկապարտեզներ, գյուղատնտեսա-
կան կայաններ, հացապաշարի խանութներ, հաշմատը-
ներ, զառամյալների տներ և այլ հիմնարկություններ կառուցելու և տնտեսապես պահ-
պանելու համար (նորերի կառուցում, կիսատի ավար-
տում, ընդարձակում, հիմնական և ընթացիկ վերանո-
րոգություն, չենքերի վարձակալություն, կահավո-
րում, տաքացում, լուսավորություն և այլն), բ) ճա-
նապարհային շինարարության համար (հասարակական
նշանակություն ունեցող գյուղական, ինչպես նաև
գաշտային ճանապարհների, կամուրջների և գետանց-
ների կառուցում, նորոգություն և պահպանություն),
գ) հակահրդեհային պաշտպանության համար (հրդե-
հաշեջ դեպոնների ու սրահների կառուցում, տաքավո-
րում, պահպանություն և սպասարկություն), դ) գյուղի բարեկարգության համար (ջրհողների, հանրա-
յին աղբյուրների, լճակների և այլ ջրամբարների, ջր-
րապարակների ու փողոցների և բաղնիքների կառու-

շում ու բարեկարդ պահպանություն) և ե) գյուղի պահպանության համար:

Դատախազը պետք է հսկի, վորպեսզի վոչ մի դեպքում ինքնահարկում չկատարվի վարչական ծախոքը հոգալու համար, ինչպես որինակ՝ իշխանության տեղական մարմինների—գավառակային գործկոմների, գյուղաբնուրժուրդների, միլիցիայի աշխատակիցների և գյուղական կատարածուների վարձատրության, այդ մարմինների շենքերի պահպանության ու կահավորման, ինչպես նաև նրանց դիմանական, ըրջադաշտության և այլ ծախքերը հոգալու համար:

Ցեթե հասարակական ժողովը կամ գյուղխորհուրդը չեղվում են որենքից և անկանոն ինքնահարկում են կատարում, ապա դատախազը այդ վորոշումների դեմողոք և ներկայացնում համապատասխան մարմին:

Անկանոն ինքնահարկում կատարելու դեպքում ամեն մի գյուղացի կարող է գիտել դատախազության և խնդրել նրա միջամտությունը:

Դ. ԳՈՒՅՔԻ ԱՊՈՐԻՆԻ ՔԱՂԱՔԱՅՑՆԱՅՈՒՄ ՑԵՎ

ԳՐԱՎՈՒՄ

Իշխանության գյուղական ստորին մարմինների աշխատակիցները շատ գեղքերում չեն իմանում, թե ինչպես պետք է ճիշտ կերպով լուծել այս կամ այն հարցը, առանց որենքը խախտելու. այս պատճառով ել նրանք համար վոչ թե դիտավորյալ, այլ չիմանալու պատճառով ամենակոպիտ կերպով խախտում են որենքը՝ Արինակ՝ մենք շատ անգամ տեսնում ենք, վոր այդ ստորին մարմիններն առանց դատարանի վորոշման

գրավում են կատարում, այսինքն՝ ինքնագլուխ կերպով գրավում են քաղաքացիների գործը կամ նրա մի մասը, մինչեռ այդ մասին դատարանը վորոշում չի կայացրել: Եռյին ձեռվել էլ հաճախ խախտում են շենքերը, քաղաքայնացնելու^{*}) և ձեռնարկությունները, մասնավորապես ջրաղացները ազգայնացնելու^{**)} վերաբերյալ որենքները: Այսպիսի գործողությունները առիթ են տալիս գդզոհելու խորհրդային իշխանության մարմիններից, այդ գործողությունները խախտում են այն քաղաքականությունը, վոր կենտրոնական իշխանությունը վարում է գյուղի տնտեսական կյանքը բարեկավելու համար, և միաժամանակ անվստահություն են առաջ բերում դեպի խորհրդային իշխանության ձեռք առած ամեն մի միջոց, վորի նպատակն է բարելավել գյուղի վիճակը:

Բանի գեռ գյուղական աշխատակիցները չեն ըմբռնի, չեն յուրացնի այն միտքը, վոր որենքը նրանց վոչ մի իրավունք չի տալիս գուշաք գրավելու, այդքան ժամանակ դատախազությունը պետք է պայքարի արդարի պիտի ապօրինի գործողությունների դեմ:

Իշխանության ստորին մարմինների գործողությունների որինականության վրա հսկելու կհեշտանա,

^{*}) Շենքերի քաղաքայնացումը այն է, յերբ տիրոջից վորեւ չենք առնում և հանձնում են ամբողջ հասարակությանն ոգտագործելու համար:

^{**)} Ազգայնացումը այն է, յերբ տիրոջից վորեւ ձեռնարկություն առնում և հանձնում են պետությանը, վորպես պետական սեփականություն:

խախտումները կպակասեն, յեթե վերադաս մարմինները ստորին մարմիններին ժամանակին ծանոթացնեն կենտրոնական իշխանության վորոշումներին: Իրենց հերթին ստորին մարմիններն ել պետք ե բնակչությանը ծանոթացնեն այն վորոշումներին, վորոնցով սահմանվում են հարկերի չափն ու գանձման ժամկետները, վորոնցով գյուղացիական բնակչությանն այս կամ այն իրավունքներն ու արտոնություններն են տրվում:

Դատախազության պարտականություններից մեկն ել այն ե, վոր աջակցի համապատասխան մարմիններին՝ բնակչությանը իր ժամանակին նրանց վերաբերող որենքներին ծանոթացնելու գործում:

Մենք խոսեցինք այն ամենակարեռը դեպքերի մասին, յերբ գավառակային գործկոմներն ու գյուղիորչուրդները իրենց վորոշումներով խախտում են որենքը կամ այնպիսի վորոշումներ են կայացնում, վորոնք հակասում են որենքին: Իհարկե, ուրիշ չառ գեղքեր ել են լինում, յերբ գյուղական իշխանության մարմինները խախտում են որենքները, սակայն մեր նպատակը չե թվել որենքի բոլոր հնարավոր խախտումները, մեր նպատակն այն ե, վորպեսզի պարզենք, վորոշենք, թե վորն ե դատախազության հիմնական պարտականությունը գյուղում: մեր նպատակն ե ցույց տալ, թե վորքան բազմատեսակ, բազմակողմանի յեն այդ պարտականությունները, և թե ինչպես այդ բոլոր պարտականությունների հիմնական նպատակը մեկ ե, այսինքն՝ պաշտպանել գյուղացիներին տեղական իշխանության ամեն տեսակ ապարինի գործողություններից:

Դատախազը միայն չի բողոքում արդեն հրատարակված վորոշումների դեմ, նա աշխատում է կանխել, թույլ չտալ, վորպեսզի ապորինի վորոշումներ հրատարակվեն. այս նպատակով դատախազության ներկայացուցիչները մասնակցում են գործկոմների և մյուս մարմինների բոլոր նիստերին և ոգնում են նրանց հարցերն այնպես վճռելու, վոր գրանից որենքը չխախտովի: Ընդհանրապես գործկոմների և նրանց բաժինների կարելորագույն հրամանների ու վորոշումների նախագծերը նախապես քննվում են դատախազության կողմից: Դատախազությունը ստուգում ե, թե այդ վորոշումներն արդյո՞ք համապատասխանում են որենքին, և իր համաձայնությունը տալիս ե միայն այն գեպքում, յեթե որենքից վորեն չեղում չի կատարվում: Այսպիսով դատախազությունը կանխում է ապորինի վորոշումներ հրատարակելու հնարավորությունը:

Դատախազության ամենակարեռը անելիքներից մեկը՝ իշխանության տեղական մարմինների ապորինի վործողությունների դեմ պայքարելն եւ դատախազության այս աշխատանքն ամենից ավելի մեծ նշանակություն ունի գյուղի համար: Գյուղում ավելի հաճախ են տեղի ունենում այնպիսի յերկությներ, վորոնց դեմ պայքարելու համար հիմնված ե դատախազությունը:

8. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԳԱՆԳԱՑՆԵՐԻ ՔՆՆԵԼԻ

Մեր բանվորա-գյուղացիական հանրապետության բոլոր գավառներում աշխատում են դատախազներ, վորոնք հնարավորության սահմաններում գնում են

գավառակներն ու գյուղերը բանվորներից ու գյուղացիներից գանգատներ ընդունելու համար :

Այս յերեք տարվա ընթացքում աշխատավորության լայն մասսաներն արգեն լավ են հասկացել դատախազության աշխատանքի կարևորությունը, նրանք արգեն գիտեն, վոր պըոլիտարական դատախազությունն ամենից առաջ աշխատավոր մասսաների իրավունքների ու չափերի պահակն ու պաշտպանն եւ ահա թե ինչու այժմ մեր հանրապետության բոլոր անկյուններից հարյուրավոր գանգատներ են արվում դատախազության հսկողության տեղական մարմիններին և կենտրոնական դատախազությանը :

Դատախազությունը գիտե, վոր նրա ստացած յուրաքանչյուր գանգատ ըզիսում և կարիքից ու անհրաժեշտությունից, այդ գանգատը տրվում և պաշտպանություն գտնելու, վոտնահարված իրավունքը վերականգնելու համար։ Դատախազությունը իր անունով ստացված բազմաթիվ ու բազմատեսակ գանգատներից իմանում եւ, թե վորտեղ և ինչպիսի ապօրինություններ ու որենքի խախտումներ են լինում, և վորտեղ են այդ յերկույթները դարձացած։ այս հանգամանքը նրան հարավորություն և ատլիս իր ուշադրությունը կենտրոնացնելու այնտեղ, վորտեղ գրությունն ավելի վատ եւ։

Դատախազները գանգատներն ընդունում են վոչ միայն իրենց գրասենյակներում, այլ և գյուղերում շրջագայելու ժամանակ։ Յենթաղրվում և ամենամուտիկ ապագայում բոլոր գավառներում նշանակել դատախազի մեկ ոգնական։ այս հանգամանքը հնարա-

վորություն կտա, վորպեսզի դատախազները ավելի հաճախ մեկնեն գավառակներն ու գյուղերը ավելի հաջողությամբ և արագ կերպով կովեն գյուղում տեղի ունեցող ապօրինությունների դեմ բացի դրանից Հանրապետության Դատախազությունը առաջարկել և բոլոր գավառական դատախազներին հնարավորության ամեն մի գեպքում նույնպես զնալ գյուղերը և անձամբ, անմիջականորեն ծանոթանալ գյուղի կյանքին և ամսավա ընթացքում այնտեղ մնալ մինչև 10 որ։

Վորպեսզի բանվորի և գյուղացու համար հեշտինի գանգատ տալը, դատախազներն ընդունում են վոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր, չգրված բազոքները ուրեմն բավական և միայն զնալ դատախազի մոտ, խոսել նրա հետ, և նա պարտավոր և իրենից կախված բոլոր միջոցները ձեռք առնելու գանգատավորի իրավունքները պաշտպանելու համար։

Դատախազնին կարելի յէ դիմել ամեն տեսակ գանգատներով, սակայն, իհարկե, չի կարելի մտածել, թէ դատախազը ամեն գանգատ և բոլոր գեղքերում ել պետք և քննի։ այն գեղքերում, յերբ տրված գանգատը դատախազի քննության յենթակա չե, նաև խորհուրդը և տալիս գանգատավորին դիմել՝ ուր հարվն և, կամ ձենց ինքը նրա գանգատն ուղարկում և համապատասխան հիմնարկին կամ պաշտոնյացին։

Կան մի շարք գործեր, վորոնց առթիվ միաք չունի դատախազին դիմելը։ Որինակ՝ յէթե պետք և շտագեցնել հորից յերեխայի համար ապրուատի միջոց (ալիքմեն) ստանալու, կամ ամուսնությունը լուծելու, կամ գույքը բաժանելու հարցը, ապա պետք չե դատա-

իսպին դիմել, հարկավոր և ուղղակի դատարան դիմել: Կան չատ հարցեր ել, վորոնց մասին ավելի լավ է և հեշտ՝ մոտիկ դորձկոմին, ժողատարանին կամ նրա հողային նոտաքընարկին դիմել: Յեթե գյուղացի վորոն հանցազործություն և նկատում, ապա ավելի հեշտ և նրա համար ուղղակի դիմել մոտակա քննիչին կամ միլիցիային:

Այն գեղքերում, յերբ դատախազը կարող ե գանցառը իսկույն առանց հետաձգելու լուծել, նա այլպես ել անում ե, սակայն այդ միջու հնարավոր չե, վորոնվճետե չատ գանդատների առթիվ հարկավոր և լինում զանազան տեղեկություններ պահանջել կամ հատուել քննություն կատարել. իսկ այդ անելու համար, հասկանալի յե, վոր ժամանակ ե հարկավոր. այսպիսի գեղքերում արդարացի չի լինի, յեթե գանդատակավորը դժգոհ է, թե դատախազը դանդաղեցնում, ձգձգում և նրա գանդատի քննությունը:

Դատախազությունը կոչված և Հսկելու, վորպեսզի իշխանության բոլոր մարմինների, հիմնարկների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների մասնավոր անձանց գործողությունները լինեն կանոնավոր և ողինական, ուստի դատախազին կարելի յե գանդատ և դիմում տալ այն բոլոր գեղքերում, յերբ իսկախում ե որենքը, կամ հանցանք և գործվում, յեթե այդ մասին արգեն չի հաղորդված քննիչին կամ միլիցիային: Դատախազությունը, ինչպես վերևում խոսվեց, իրավունք ունի ամեն մի հիմնարկից պահանջելու յուրաքանչյուր հարցի վերաբերյալ տեղեկություններ, բացատրություններ և այլ նյութեր: Այս-

պիսով, դատախազին գանդատ կարելի յե տալ ամեն մեկի գեմ, ով խախտում ե որենքը, մասնավոր ժարդ կրինի նա, թե խորհրդային հիմնարկի աշխատակից, այդ միկնույն ե: Մեր խորհրդային մարմինների, հատկապես գյուղական մարմինների կյանքում դեռ չատ ապորինություններ կան, վորոնք մեզ ժառանգություն են մնացել զարական և զաշնակցական նախկին կառավարությունից: Շատ գեղքերում նկատվում ե նաև անգործություն, գործերը ձգձգելու, գեպի գյուղացու կարիքներն ու պահանջները արհամարհանքով և անուշադրությամբ վերաբերվելու գեղքեր: Այս բոլոր յերեսոյթների վեմ խորհրդային իշխանությունն ու կոմունիստական կուսակցությունը վճռական կերպով կովում են: Մի շարք վճռական, իսկամ միջոցներ են ձեռք առնվում, վարպեսզի ամբացվի խորհրդային ապարատ, և կանոնավորվեն նրա աշխատանքները, ինչպես այդ պահանջում են նոր կյանքի շինարարության ընթացքը և աշխատավոր լայն մասսաների շահերը: Այս նպատակով խորհրդային իշխանությունը վոչ միայն վերակառուցում, վերակազմակերպության և յենթարկում մեր հիմնարկները, այլև ամեն միջոց գործ և գնում, վարպեսզի այդ հիմնարկներում աշխատեն ազնիվ, աշխատանքը և գործի ընդունակ աշխատակիցներ, իսկ անպետքները՝ հեռացվեն: Ահա այս պատճառով ել դատախազությունը մեծ ուշադրություն է զարգնում նաև այն գանդատաների վրա, վորոնք տրվում են պաշտոնյաների գործողությունների գեմ:

Գանդատ տալիս պետք ե չմոռանալ, վոր այդ գանցառը պետք ե լինի հիմնավորված, այսինքն նրա մեջ

զրգած տեղեկությունները պետք և ճիշտ լինեն. չի կարելի զանգատի անվան տակ դիտավորյալ կերպով սուտ տեղեկություններ հաղորդել և ուրիշին մեղադրել հանցանքի մեջ: Դիտավորյալ կերպով սուտ տեղեկություններ տալու համար որենքը իիստ կերպով պատժում է:

Իհարկե, յեթե պարզվի, վոր վորեկ հանցանքի մասին տեղեկություն տվողը բարեխզմորեն, այսինքն՝ սուանց չար դիտավորության սիալվել է, և իրականում կամ այդպիսի հանցանք չի գործվել, կամ յեթե հանցանքը կատարվել է, ապա վոչ այն մարդու ձեռքով, վորի մասին տեղեկություն և արգած զանգատի մեջ, ապա այդպիսի սիսալի, այդպիսի բարեխզմություններ, թյուրիմացության համար վոչ վոք չի կարող պատասխանատվության յենթարկել:

9. ԴԱՏԱԽԱՉԻ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ
Իշխանության ստորին մարմինների գործողությունների որինականության վրա հսկելու համար դատախազները կնում են գյուղերը և այնտեղ գանդատներ են բնդունում գյուղացիներից բացի գրանից նրանք մասնակցում են զավառակացին գործկոմների և գյուղաբնակչությունների նիստերին, աջակցելով նրանց՝ որենքը պարզաբանելու և բացատրություններ ու խորհուրդներ տալու միջոցով: Գյուղերում ըլջազայիլիս դատախազները գյուղացիների բազմամարդ ժողովներ են գումարում, վորակել գրույցներ են ունենում գյուղացիների հետ գործող որենքները գործադրելուն և պարզաբանելուն վերաբերող բազմաթիվ հարցերի շուրջը: Իշխանության ստորին մարմինների գործու-

ղությունների որինականության վրա հսկելու համար դատախազները միայն զանգատներ քննելով և ստորին մարմինների նիստերին մասնակցելով չեն բավարականաւում: Նրանք մասնակցում են նաև զավառական գործկոմների նիստերին: Այստեղ լույսում են գյուղական խորհուրդների և զավառակային գործկոմների զեկուցումները: այդ զեկուցումներից զատախազությունը տեղեկություն և ստանում այս կամ այն ըրջանի գրության մասին, ծանոթանում, իմանում և, թե վոր ըրջանում են ավելի շատ ապօրինություններ և որենքի խախտումներ տեղի ունենում և այդպիսով հանրավորություն և ստանում պարզելու, թե վոր ըրջանի վրա պետք և ավելի մեծ ուշագրություն զարձնել:

10. ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՊԱՍՈՒՄ Ե, ՎՈՐՊԵՍԶԻ
ԳՅՈՒՂԵՐ ԾԱՆՈԹԱՆԱ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԵՆՔՆԵՐԻՆ

Մեր գյուղը զեռ շատ քիչ տեղեկություն ունի խորհրդային որենքների մասին, ծանոթ չեն նրանց բովանդակությանը, այդ որենքները լավ չգիտեն նաև իշխանության գյուղական մարմինների աշխատակիցները: մինչդեռ առանց որենքներն իմանալու անկարելի յե գյուղում կանոնավոր և նորմալ կերպով աշխատել: Որենքը չիմանայու զեկուցմ վոչ միայն կարելի յե հեղափոխական որինականության պահանջները խախտել, այլ և կարելի յե հանցագործության մեջ ընկերները որենքները չիմանալը միայն խանդարել կարող և ամեն մի կարենը և ոգտակար աշխատանք, — վոչ թե կոպնի, այլ կվնասի ընդհանուր գործին: Ահա թե ինչու կոմունիստական կուսակցությունը ու խորհրդային

իշխանությունը այժմ՝ ամեն միջոց՝ ձևոք են առնում, վորպեսզի գյուղը ծանոթանա խորհրդային որենքներին և անտեղյակ ու անիբազեկ չմնա:

Իհարկե դատախազությունը, առաջին հերթին, զրադվում և գյուղը մեր որենքության հետ ծանոթացնելու աշխատանքով՝ այս նպատակով դատախազները գատական աշխատանքների հետ միասին կազմակերպում են բնակչությանը իրավաբանական ոգնություն ցույց տալու գործը, վորոշ տեղերում համապատասխան մարմինների հետ հիմնում են խրճիթվարների և այլ աշխատակիցների համար դասընթացքներ, վորտեկներանց ծանոթացնում են որենքներին և իրավաբանական հարցերին, գյուղացիության հետ զրուցյներ են աւենինում, բացատրելով գյուղի վերաբերյալ որենքներն ու որենալբական հարցերը: Թեեւ մեր որենքները ընդհանրապես գրվում են պարզ և հասկանալի լեզվով, բայց այդ ունքների բացատրության, պարզաբանության կարիք և զգում վոչ միայն կիսագրանդէ գյուղին, այլ նաև գյուղում աշխատող գրադետ պաշտոնյան:

Գավառական և կենտրոնական դատախազությունն ամեն որ չըշաններից և լրագրերից տասնյակներով և հարյուրներով նամակներ և ստանում, վորոնցով գյուղացիները գանդատվում են, վոր որենքների բովանդակությունը բարդ և, անորոշ և այդ պատճառով և նրանց համար անհասկանալի: Այդ նամակներից յերեսմ և, թե ինչպես գյուղացին հաճախ դժվարանում է հասկանալ նրա համար կենսական, ամենակարևոր նշանակություն ունեցող այնպիսի որենքները, ինչպիս:

որինակ, հողային համայնքների իրավունքները, հարկային որենքները, հողաշինարարության որենքները և այլն: Այդ նամակներում հաճախ գյուղացիները նկատում են, վոր բնակչությունը իր որինական իրավունքները չգիտե: մի տեղ որենքը չիմանալու պատճառով բատրակը չի կարողանում տիրոջից իր վարձն ստանալ, մի այլ տեղ կուրակը այնպիսի ծանր պայմաններով և պարտք տալիս չքափորին, վոր նրա կաշին և քերթում: կամ այստեղ և այնտեղ կնքում են վաշխառուական, կեղեքիչ պայմանագրեր: Կին-աշխատավորուհին ամիսներով, իսկ յերեմննան տարիներով այս ու այն կողմն և ընկնում արտոնյալ պայմաններով անտառանյութ ստանալու համար, կամ չի կարողանում մարդուց իր յերեխաների համար ապրուսի այն միջոցն ստանալ, վոր վորոշված և զատարանի վճռով: գյուղացին, չիմանալով զատարաններում գործը վարելու որենքներին ու կարգը, անց և կացնում զանգատ տալու համար որենքով սահմանված ժամանակամիջոցը և այդ պատճառով ել գործը տարվում է:

Գյուղի կյանքում վերջերս կատարված դիտողությունները, գյուղի ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր գյուղը, հատկապես նրա չքավոր մասը, բացառապես, միմիայն որենքները չիմանալու պատճառով չի կարողանում ոգափել այն իրավունքներից ու արտոնություններից, վորոնք որենքով արվում են նրան:

Բացի գյուղացիական մասսաներին խորհրդային որենքներին ծանոթացնելը, զատախազությունը գյուղի խորհրդային և կուսակցական աշխատակիցներին

Տանոթացնում և նաև մեր քրեական և քաղաքացիական որենքների հիմնական սկզբունքներին։ Գյուղում աշխատող ընկերներից շատերը դեռ մինչև այսոր ել շարունակում են իրենց գործնական աշխատանքի ընթացքում կիրարկել ուղղմանկան կոմունիզմի շրջանի ձեւերն ու յեղանակները։

Նկատի ունենալով այդ յերեսութը, վորք գեռ րափական տարածված և մեղանում, գատախազությունը գաստիարակչական մեծ աշխատանք և կատարում, այսինքն՝ նա գյուղում աշխատող ընկերներին ծանոթացնում և մեր գործող որենքների հիմնական սկզբունքներին, վորպեսզի նրանք կարողանան գյուղում սպակար, կանոնավոր աշխատանք կատարել, չշեղվելով որենքից։

Դատախազի աշխատանքը շատ գեղքերում—Հենց իր աշխատավոր բնակչության աշխատանքն է. այս իսկ պատճառով դատախազությունը Հենց իրենց, աշխատավորներին, նրանց կուլտուրական և առաջադեմ տարրերին մասնակից և անում այն աշխատանքներին, վորոնք կատարվում են բնակչությանը խորհրդացյին իշխանության կարևորագույն որենքներին ծանոթացներու համար։ Դատախազությունը կազմակերպում և հասարակական մեղադրանք, այսինքն՝ քրեական գործեր քննելիս վորպես մեղադրող գուրու են զայիս հասարակության կողմից նշանակված անձինք. այս նպատակով դատախազությունը առաջ և քաշում աշխատավոր տարրերին և ապա այդ գաղաքացիան գաղաքացիներին ուղղում է աշխատանքներին։ Վորուստարական հեղափոխության տարիների ընթացքում բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաները իրենք, անձամբ են սահմանում իրենց որենքները. այժմ յերբ նոր կյանքի կառուցաւմը հրամայաբար պահանջում և ամրացնել ու անշեղորեն կիրարկել այդ որենքները,—այդ որենքները խախտողների գեմ պայքարելու դործը ևս պետք է

և իրականացնելու ասպարեզում։ այդ քաղաքացիները գրանով ել զանուում են մշտական կապ դատախազության և աշխատավոր մասսաների միջև։

Վորպեսզի որենքը իրականացնող և նրանց կատարմանը հետևող անձանց թիվը ել ավելի շատ լինի, վորպեսզի գյուղի և գատախազության միջև ամուր կապ հաստատվի, գյուղի բոլոր կուլտուրական, գետակից ուժերը, գյուղացիական լայն ակտիվը, գյուղի կուսակցական և կոմյերիական բոլոր կազմակերպությունները պետք և ոզնության դան գատախազությանը այս ասպարեզում։

11. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՆ ԴԱՐՁԵՎՈՒՄ ԳՅՈՒԴԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Խորհրդային դատախազությունը վոչ միայն իր նպատակներով, այլ նաև իր կազմով բանվորա-գյուղացիական դատախազություն և գիտակից և վրագետ բանվորներն ու գյուղացիները դատախազական հսկողության աշխատանքների ասպարեզ են քաշում, ուստի և պարզ և, թե ինչու գյուղացիական լայն մասսաները պետք և ամեն կերպ աշխացեն դատախազության աշխատանքներին։ Պրուետարական հեղափոխության տարիների ընթացքում բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաները իրենք, անձամբ են սահմանում իրենց որենքները. այժմ յերբ նոր կյանքի կառուցաւմը հրամայաբար պահանջում և ամրացնել ու անշեղորեն կիրարկել այդ որենքները,—այդ որենքները խախտողների գեմ պայքարելու դործը ևս պետք է

Հենց իրենց մասնաների գործը հանդիսանա : Այդ պայքարը միացնող, այդ պայքարին մի լնդհանուր ուղղություն տվող մարմինը ստեղծված է . այդ մարմնին ոգնելու համար աշխատավորները պետք է իրենց շարքերից լավագույն մարդկանց տրամադրեն :

Սակայն անհուսալի չե՞ արդյոք, այս պայքարը կիսրողանա՞նք հաղթել մենք նաև այս ճակատում— հեղափոխական որբնականությունն ամբողջություն ճակատում :

Պետք է միանգամայն վստահ լինել և հաստատ հավատ ունենալ, վոր հաղթանակն ապահովված է : Դրան յերաշխիք կարող է ծառայել՝ սլույտարական իշխանության հաղթանակի համար բանվոր դասակարգի և գյուղացիության մղած պայքարի ամբողջ պատմությունը :

Հեշտ չե այս պայքարը, սակայն աշխատավոր մասները, սերտ կերպով միացած կոմունիստական կոստակցության հետ, համերաշխ կերպով կաշխատեն՝ նաև այս դժվարին պայքարը իր հաղթական վախճանին հաջնելու համար :

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ամբողջ աշխատավորության հզոր աջակցությամբ, դատախազությունը կկատարի իր վրա դրված խնդիրները :

Կոմունիստական կուսակցությունը, ինչպես միշտ, նաև այս պայքարում վստահելի առաջնորդ կհանդիսանա, ուստի մեր հաղթանակն ապահովված է նաև այս ճակատում :



ՀՍԽՀ ԱՐԴԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀԱՅՀ Սահման պրոթյուն (մատչ. պարզաբ.).
2. Նույնը — թուրքերեն.
3. ա) Կանոնադրություն քաղխոհութեաբի մասմասունքների.
 բ) Հրանանգ գյուղխորհրդի անդամների իրավունքը՝
 ների և պարտականությունների մասին. } Հայաց
 գ) Հրանանգ գյուղխորհրդի սեկցիաների մասին. } Հայաց
 դ) Կանոնադրություն գյուղխորհրդի վերաբերյալ համաձայն. } Հայաց
4. Հրան անգ քաղ. և գյուղ. խորհությունների ընտրությունների
 և խորհությունների համագումարներ հրավիրելու մասին.
5. Նույնը — թուրքերեն.
6. Նույնը — ռուսերեն.
7. Գյուղխորհությունների դատական սեկցիաների մասին (մատչելի պարզաբ.).
8. Գյուղխորհությունների իրավունքներն ընդլայնելու մասին (մատչելի պարզաբ.).
9. Ամսունության, ընտանիքի և խնամակալություն մասին (մատչելի պարզաբ.).
10. Նոր բնակարանային ու ենք (մատչելի պարզաբ.).
11. Գյուղխորհությունների դատական սեկցիաների մասին (թուրքերեն).
12. Գյուղխորհությունների իրավունքներն ընդլայնելու մասին (մատչ. պարզաբ.) թուրքերեն.
13. Ամսունության, ընտանիքի և խնամակալության Արենընգիքը — թուրքերեն.
14. Մասնավոր բնակարանային շինարարությունը և նոր գրդային որենագրությունը (մատչ. պարզաբ.).
15. Ո՞վ և գատախազը և ի՞նչ աշխատա՞ք և կատարում նա գյուղում (մատչ. պարզաբ.).
16. Մամուլի սակէ և նենցագային հանցանքները ՀԱՅ Հանրապետության մեջ և Արենագրությունը (օրենքների մատչելի պարզաբանություն).